«Հաստատում եմ»

ԵՊՀ պրոռեկտոր,

Ռ. Հ. ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ

06.07.2026 թ.

Կարծիք

Երևանի պետական համալսարանի Հայ արվեստի պատմության և տեսության ամբիոնի 2026 թվականի հուլիսի 6-ի նիստի թիվ 17 արձանագրությունից Շողակաթ Վարդանի Դևրիկյանի «Գրիգոր Լուսավորչի պատկերը հայկական և եվրոպական կերպարվեստում (9-20-րդ դարերի համատեքստում) ատենախոսության *ԺԷ.00.03 - «Կերպարվեստ, դեկորատիվ և կիրառական արվեստ, դիզայն» մասնագիտությամբ արվեստագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման վերաբերյալ*

Կարծիքը հաստատված է ԵՊՀ Հայ արվեստի պատմության և տեսության ամբիոնի 2026 թ. **հուլիսի 6-ի նիստում** (արձանագրություն թիվ 17): Նիստին մասնակցում էին ամբիոնի վարիչ արվ. թ., դոցենտ Ս. Վարդանյանը, արվ. արվ. թ., դոցենտներ Ս. Մանուկյանը, Ի. Թաջարյանը, Լ. Պիպոյանը, ասիստենտ Դ. Ղազարյանը, դասախոսներ արվ. թ. Ա. Ավագյանը, արվ. թ. Մ. Մինասյանը, արվ. թ. Հ. Վարդանյանը, արվ. թ. Լ. Սարգսյանը, Մ. Վարդանյանը:

Շողակաթ Դևրիկյանի ատենախոսությունը Սուրբ Գրիգոր Լուսավորչի պատկերագրությանը նվիրված համապարփակ ուսումնասիրություն է:

Գրիգոր Լուսավորիչը հանդիսանալով համաքրիստոնեական սուրբ, ներկայացվել է տարբեր մշակույթների պատկերագրական համակարգերում՝ կրելով համապատասխան ազդեցություններ: Սուրբը և նրա վարքը հանդես են եկել արվեստի տարբեր տեսակներում՝ մանրանկարներում, քանդակում, գեղանկարներում, սրբապատկերներում, փորագրանկարներում, որմնանկարներում, կիրառական արվեստում և այլն:

Մինչ այժմ Գրիգոր Լուսավորչի պատկերման ավանդույթներին անդրադարձել են տարբեր հետազոտողներ: Սակայն այդ անդրադարձներն ունեցել են հատվածական բնույթ՝ հիմնականում ներկայացվելով առանձին հոդվածների տեսքով: Հաշվի առնելով Գրիգոր Լուսավորչի բացառիկ նշանակությունը հայկական իրականության համար, ինչպես նաև նրա կարևորությունը որպես համաքրիստոնեական սրբի, վաղուց հասունացել էր նրա պատկերագրության, պատկերման ավանդույթների և պատկերագրական տիպերի համակողմանի ուսումնասիրության ու մեկ ամբողջական, ծավալուն գիտական աշխատությամբ ներկայացման անհրաժեշտությունը: Այս անհրաժեշտությունն էլ լրացնում է Շողակաթ Դևրիկյանի ներկա ատենախոսությունը:

Աշխատանքի նպատակն է դիտարկել Լուսավորչի կերպարի պատկերագրական զարգացումը հայ և համաշխարհային արվեստի համատեքստում:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, նկարների ցանկից և նկարների հավելվածից:

Աշխատանքն առաջին հերթին նվիրված է Լուսավորչի պատկերի ժամանակագրական փոփոխությունների հետագծի ուսումնասիրությանը: Այն սկսվում է սրբի դեռևս վաղ պատկերումներից, որոնք ընդգրկված են առաջին՝ «Գրիգոր Լուսավորչի պատկերագրական ավանդույթը 9-17-րդ դարերի կերպարվեստում» գլխում: Ատենախոսը շեշտադրում է սրբի տարբեր մշակութային միջավայրերում ստեղծված պատկերների համապատասխան տեղական առանձնահատկությունները՝ հանգելով այն եզրակացության, որ Լուսավորչի պատկերագրությունը ձևավորվել է բյուզանդական, հայկական և եվրոպական արվեստների փոխազդեցությամբ: Սկզբնական շրջանում սուրբը ներկայացել է որպես հայրապետ, իսկ 16-17-րդ դարերից, արդեն եվրոպական արվեստի ներթափանցմամբ, պատկերագրությունը հարստանում է վարքագրական տեսարաններով, իսկ պատկերումը մոտենում է նոր ձևավորվող գեղանկարչության սկզբունքներին:

Երկրորդ՝ «Գրիգոր Լուսավորչի պատկերը 16–20-րդ դարերում Եվրոպայում ստեղծված կերպարվեստի գործերում» գլխում առանձին ենթաբաժնով ներկայացվում է վաղ միջնադարից մինչև մեր օրերը գործող Իտալիայի Նեապոլ քաղաքի Սուրբ Գրիգոր Հայի

վանական համալիրը: Մյուս առանձին ենթաբաժնում քննության են առնվում Եվրոպայում տպագրված փորագրանկարները: Այս փորագրանկարները հատկապես կարևոր են, քանի որ դրանց զգալի մասը կամ առհասարակ չի ուսումնասիրվել, կամ արժանացել է միայն սակավաթիվ անդրադարձերի: Գլուխն ամփոփում են Մխիթարյան միաբանության գեղարվեստական ժառանգությունը և ռումինահայ սրբանկարչությունը:

Ատենախոսը եզրակացնում է, որ Լուսավորչի կերպարը եվրոպական միջավայրում ընկալվել է ոչ միայն որպես Հայաստանի քրիստոնեական դարձի խորհրդանիշ, այլև ըստ նպատակի եղել է հայերի ազգային հույզերի վրա ազդելու «ագիտացիոն գործիք»: Եվրոպայում ստեղծված Լուսավորչի պատկերները ձևավորվել են տարբեր դավանական, մշակութային և գեղարվեստական միջավայրերի փոխազդեցությամբ: Լուսավորիչը ներկայացել է որպես նահատակ, հայրապետ, քարոզիչ, հրաշագործ:

Երրորդ գլխում՝ «Գրիգոր Լուսավորչի պատկերը 18-20-րդ դարերում Հայաստանում ստեղծված կերպարվեստի գործերում» օրինակների քննության միջոցով հեղինակը ցույց է տալիս միջնադարյան գաղափարական և գեղարվեստական ավանդույթի փոփոխությունն արդեն նոր շրջանում, որտեղ տեղի է ունենում կերպարի վերաիմաստավորում: Սակայն, այնուամենայնիվ, անգամ նոր ընկալումների պայմաններում, Լուսավորչի պատկերը մշտապես արտահայտել է հայ ժողովրդի ինքնագիտակցությունն ու համաքրիստոնեական աշխարհի հետ ունեցած կապը: Հեղինակը կարևորում է հատկապես Հովհ. Այվազովսկու, Վ. Սուրենյանցի և Եղ. Թադևոսյանի ստեղծագործությունները, որոնցում Գրիգոր Լուսավորչի կերպարը և նրա հետ կապված առանցքային իրադարձությունները ներկայացվում են հայկական գեղանկարչության տարբեր փուլերի գեղարվեստական սկզբունքներով:

Եզրակացություններում ներկայացված են ուսումնասիրության արդյունքում կատարված հիմնական եզրահանգումները, որոնք վկայում են, որ հեղինակն, ըստ էության, լուծել է իր առջև դրված խնդիրները:

Օգտագործված գրականության ցանկը ներառում է 216 մատենագիտական միավոր՝ հայերեն, ռուսերեն, անգլերեն, հունարեն և այլ լեզուներով: Հեղինակն օգտագործել է տպագիր և անտիպ սկզբնաղբյուրներ, ձեռագիր մատյաններ, ինչպես նաև

պատկերագրության, աստվածաբանության, եկեղեցագիտության, ծիսագիտության խնդիրներին վերաբերող հարուստ գրականություն, ինչը հեղինակին հնարավորություն է տվել իր ուսումնասիրությունը կառուցել ամուր սկզբնաղբյուրային և գիտական հիմքի վրա:

Հավելվածում զետեղված են 252 նկարներ, որոնք ամբողջությամբ արտացոլում են աշխատանքում ուսումնասիրվող նյութը:

Ուսումնասիրությունն առանձնանում է օրինակների լայն ընդգրկվածությամբ: Ատենախոսությունը երկարատև, հետևողական, հիմնավոր աշխատանքի արդյունք է: Այն աչքի է ընկնում դեռևս անհայտ նմուշների ներկայացումով, որոնք հատկապես կարևոր են նորույթի տեսանկյունից: Աշխատանքը նկարագրողական չէ, այլ վերլուծական՝ հիմնված նյութի համադրական քննության, ընդհանրացման և ի մի բերման վրա: Կարևոր են տիպաբանական խմբավորումները: Առանձնակի ուշադրության են արժանի Լուսավորչի պատկերների կազմված ցանկերը և առանձին պատկերների վերլուծությունները, որոնք տեսանելի արձանագրումից բացի, նաև ուրույն մեթոդ են հաղորդում աշխատանքին:

Հատկանշական է, որ հեղինակն ուսումնասիրության նյութը դիտարկում է որպես մշակութային հաղորդակցության արդյունք: Ատենախոսության տարբեր բաժիններում համոզիչ կերպով երևում է, որ հայկական և եվրոպական արվեստները ներկայացված չեն որպես միմյանցից մեկուսացված երևույթներ, այլ ուսումնասիրվում են փոխազդեցությունների, գաղափարների շրջանառության և պատկերագրական ավանդույթների տարածման տեսանկյունից: Այս մոտեցումը զգալիորեն ընդլայնում է աշխատանքի գիտական նշանակությունը և այն դուրս է բերում զուտ ազգային արվեստի պատմության շրջանակներից:

Աշխատանքում հեղինակը փորձել է խուսափել կանխակալ եզրահանգումներից և հիմնական դեպքերում ձգտել է հիմնավորել իր տեսակետը՝ համադրելով արվեստի գործերը, գրավոր աղբյուրները և մասնագիտական գրականությունը: Նույնիսկ այն դեպքերում, երբ քննարկվում են քիչ ուսումնասիրված կամ վիճելի հարցեր, դատողությունները կառուցված են զգուշավոր և գիտականորեն կշռադատված ձևով:

Ատենախոսությունն ունի հստակ կառուցվածք: Երեք գլուխները չեն ընկալվում որպես ինքնուրույն ուսումնասիրություններ, այլ փոխլրացնում են միմյանց և աստիճանաբար հանգեցնում ընդհանուր եզրակացությունների: Այս կառուցվածքային ամբողջականության շնորհիվ ընթերցողը ոչ միայն ծանոթանում է բազմաթիվ արվեստի գործերի, այլև կարողանում է հետևել Սուրբ Գրիգոր Լուսավորչի կերպարի գաղափարական և պատկերագրական զարգացման ընդհանուր ընթացքին:

Ուսումնասիրության ընթացքում ձեռագրերը, որմնանկարները, տպագիր պատկերները, սրբապատկերները և գեղանկարները չեն ներկայացվում որպես առանձին արվեստի տեսակներ, այլ դիտարկվում են որպես մեկ ընդհանուր մշակութային գործընթացի տարբեր դրսևորումներ: Այս սկզբունքն աշխատանքին հնարավորություն է տալիս կատարել առավել լայն ընդհանրացումներ:

Այս ամենի հետ մեկտեղ կցանկանայինք նշել մի քանի առաջարկներ.

- Հետագայում նպատակահարմար կլինի ուսումնասիրության մեջ ընդգրկել նաև Ռուսաստանի կրոնի պատմության թանգարանում պահվող Գրիգոր Լուսավորչին ներկայացնող 19-րդ դարի սրբանկարները, որոնք հրատարակված են «Армянская коллекция государственного музея истории религии. Автор-составитель **Е. Николаева,** Санкт-Петербург, 2011, 84 с.» ցուցահանդեսի կատալոգում:
- Ցանկալի է «ֆրագմենտ» օտարաբանությունը փոխարինել «հատված» կամ «դրվագ» բառերով՝ ըստ համատեքստի:
- Հաշվի առնելով, որ ատենախոսության հիմնական նպատակը պատկերագրական զարգացումների բացահայտումն է, հեղինակի ուշադրությունն օրինաչափորեն կենտրոնացած է պատկերագրական վերլուծության վրա: Միևնույն ժամանակ, առանձին արվեստի գործերի դեպքում կարելի էր ավելի մանրամասն անդրադառնալ նաև դրանց ոճական և կատարողական առանձնահատկություններին, ինչը լրացուցիչ կխորացներ աշխատանքի արվեստաբանական բաղադրիչը:

• Հայերեն թե՛ ձեռագիր, թե՛ տպագիր հմայիլներում Գրիգոր Լուսավորչի պատկերը հաճախ է հանդիպում որպես պատկերաշարի պարտադիր մաս: Այս մասին էլ կարելի էր մի փոքր գրել:

Նշված դիտողությունները էական ազդեցություն չունեն, այլ առաջարկներ են ուսումնասիրության հետագա զարգացման համար:

Աշխատանքում պահպանված են գիտական ուսումնասիրության բոլոր անհրաժեշտ կանոնները:

Ատենախոսությունը հեղինակի գիտական հետազոտությունների հիման վրա կազմված աշխատություն է, որն արտահայտվել է 8 հոդվածներում:

Աշխատանքը բավարարում է Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կարգի 7-րդ կետի «գիտության տվյալ բնագավառում կարևոր նշանակություն ունեցող խնդրի լուծում» պայմանին, իսկ Շողակաթ Վարդանի Դևրիկյանն արժանի է ԺԷ.00.03 - «Կերպարվեստ, դեկորատիվ և կիրառական արվեստ, դիզայն» մասնագիտության գծով իր հայցած արվեստագիտության թեկնածուի գիտական աստիճանին:

ԵՊՀ ՀԱՅ ԱՐՎԵՍՏԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉ,
ԱՐՎ. Թ., ԴՈՑԵՆՏ՝ **Ս. Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ**

Արվ. թեկն. դոցենտ, Ս. Վ. Վարդանյանի ստորագրությունը հաստատում եմ՝

ԵՊՀ ԳԻՏԱԿԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ,
Բ. Գ. Թ., ԴՈՑԵՆՏ՝ **Մ. Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

06.07.2026 թ.